ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 403 – Ա

«ԿԱՊԱՆԻ ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշմամբ հաստատված հավելվածը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթն անցկացնելու համար հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմինե Ավագյանին:

3. Հանձնաժողովի քարտուղար նշանակել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Նոննա Բաղդասարյանին:

2026-08-28 17:47:13 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԴ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 28
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. օգոստոսի 28-ի
N 403-Ա որոշման

ԿԱԶՄ

«Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի անցկացման հանձնաժողովի

Մերի Գանդալյան՝	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Նարինե Աթայան՝	Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ
Արմինե Ավագյան՝	Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Արփինե Բաղդասարյան՝	Իրավաբանական բաժնի պետ
Թամարա Կարապետյան՝	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Քրիստինե Հակոբյան՝	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Արմենակ Դավթյան՝	«Դեպի լավ ապագա» ԵԿ ՀԿ անդամ

2026-08-28 17:43:56 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ